«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

# *Ավարտական հետազոտական աշխատանք*

## *Թեմա՝ Լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրումը բնագրի շուրջ աշխատանքի միջոցով*

***Առարկա՝ Տարրական դասարաններ (դասվարներ)***

***Ուսուցիչ՝*** **Հակոբյան Էմիլյա**

**Դպրոց՝ Կ. Ասրյանի անվ. 171 դպրոց**

**Ղեկավար՝ Ավիդա Խալաթյան**

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..3

ԳԼՈՒԽ 1. ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ…….....4

1.2 ԲՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ……9

ԳԼՈՒԽ 2. ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

2.1 ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ, ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ և ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ……11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……..……14

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..……15

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է մի կողմից բազմակողմանիորեն զարգացած, գրագետ, լեզվական գիտելիքների տիրապետող անձ դաստիարակելու կենսական պահանջով, մյուս կողմից տարրական դպրոցում նշված կարողությունների և որակների ձևավորմանը միտված մեթոդական համակարգի անկատարությամբ:

Ուսումնասիրության նպատակն է.

- մշակել կրտսեր դպրոցականի՝ լեզվական տարրական գիտելիքների յուրացմանն ու զարգացմանը նպաստող մեթոդական քայլաշար:

Ուսումնասիրության խնդիրներն են.

- ուսումնասիրել մեր թեմայի հիմնախնդրին վերաբերող գիտամեթոդական գրականություն,
- մշակել և փորձարկել բնագրի շուրջ աշխատանքի միջոցով վարժությունների համակարգ և հիմնավորել դրանց արդյունավետությունը,
- մշակել բնագրի շուրջ աշխատանքի միջոցով կրտսեր դպրոցականի՝ լեզվական տարրական գիտելիքների զարգացումն ապահովող մեթոդական ցուցումներ:

Ուսումնասիրության նորույթը.

- Մշակել ենք լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման քայլաշար:

Ուսումնասիրության մեթոդներն են.

- մեր աշխատանքի վերաբերյալ մասնագիտական գրականության, մայրենիի ծրագրի, դասագրքերի ուսումնասիրում և քննարկում,
- մայրենիի դասերի ունկնդրում և փորձարարական դասերի վարում:

# ԳԼՈՒԽ 1. ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

## 1.1. ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Տարրական դասարաններում մայրենիի քերականության դասավանդման հարցը մշտապես երկարատև բանավեճի առարկա է եղել, հակասական կարծիքներ են արտահայտել լեզվաբան-մեթոդիստները: Այսպես՝ Ղ. Աղայանը դեմ էր տարրական դասարաններում քերականության դասավանդելուն, իսկ Մ. Աբեղյանն այն կարծիքին էր, որ առանց քերականության ընկալման կրտսեր դպրոցականը մայրենի լեզուն ըմբռնում է բնազդաբար, այլ ոչ թե գիտակցված:

Տարրական դասարաններում լեզվական նյութը չպետք է դառնա ուսուցման նպատակ, այլ այն պետք է լինի միայն միջոց նպատակին հասնելու համար, այսինքն՝ միջոց գրական լեզուն ճշտությամբ հասկանալու, շարահյուսորեն ճիշտ, կապակցված, սահուն խոսք կառուցելու համար: Դպրոցական կրթության համակարգում տարրական կրթությունը և դրա միջոցները, որոնցից հիմնականը դասագիրքն է, ըստ իրենց նշանակության, տարբերվում են և առանձնանում իրենց ինքնատիպությամբ: Հայտնի է, որ դպրոցի կրթական խնդիրը սովորողներին գիտությունների հիմունքներով, գիտելիքների ու հմտությունների համակարգով զինելն է: Տարրական կրթությունը դպրոցի առաջին աստիճանն է, որը նախանշում է նրա հաջորդ աստիճանները: Տարրական կրթության հիմնական նպատակը պետք է լինի երեխայի ընդհանուր զարգացումը: Այս նպատակների ու խնդիրների մեջ առանցքային է գիտելիքների և ունակությունների յուրացման և երեխայի զարգացման հարաբերակցության հարցը: Տարրական կրթության հիմնական նպատակներից մեկը երեխաների երևակայության զարգացումն է: Հետաքրքրասիրությունը երեխայի ամենամեծ խթանն է, ուստի երեխայի մտքում մնում է այն, ինչ անցել է նրա սրտի դռնով : Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, և այն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է ճիշտ կազմակերպված աշխատանք, որի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սովորողը գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ ստանում է իր կյանքի հետագա գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ: Ուսումնառության ընթացքում իրականացվում է երեխայի հոգեկանի զարգացումը: Կրթության հետ միաժամանակ երեխան պետք է դառնա նախաձեռնող, կարողանա ինքնուրույն հետազոտել, ստեղծագործել, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում, փոխանցել իր իմացածը, ձեռք բերել հաղորդակցական, համագործակցային կարողություններ և ինքնուրույնություն: Կրտսեր դպրոցական տարիքը գիտելիքների կուտակման տարիք է, և այս տարիքի երեխաները պատրաստակամ են գիտելիքներ ձեռք բերելու հարցում: Ուսուցման հիմքը դրվում է ուսումնառության սկզբնական շրջանում և այնուհետև շարունակվում դպրոցական ողջ տարիների ընթացքում: Ուսուցման ընթացքում ուսուցիչը կրտսեր

դպրոցականների առջև խնդիր է դնում իր կողմից առաջադրվող հարցերին տալ լիարժեք և տրամաբանված պատասխաններ, խոսել ճիշտ ու գրագետ, խուսափել անհարկի կրկնություններից: Հատկապես ուշադրություն պետք է դարձնել, որ աշակերտն ազատ և անկաշկանդ մտածի և հաղորդակցվի, կարողանա հասկանալ տրված հարցերը և ճշգրիտ պատասխանել դրանց: Տարրական դպրոցում մայրենիին նվիրված մեթոդիկաներում նշվում է և համոզիչ հիմնավորվում, որ լեզվական քերականական գիտելիքների ուսումնասիրումն ու այդ ուղղությամբ երեխաների կարողությունների ձևավորումը շահեկան է իրականացնել փուլ առ փուլ՝ սկսած երեխայի ուսումնական գործունության առաջին օրից:

Մայրենիի տարրական դասընթացը բաժանվում է երկու բաժինների՝ լեզվական նախագիտելիքներ և լեզվական տարրական գիտելիքներ: Այս երկուսն էլ անցնում ենք համակցված, ընթերցանության հետ մեկտեղ, ինչը հնարավորություն է տալիս լեզվի ուսուցումն ավելի արդյունավետ ու նպատակային դարձնել: Այս դեպքում երեխաները քերականական կանոններն ու սահմանումներն անգիր անելու փոխարեն լեզվական օրինաչափությունները ինքնուրույնաբար կիրառում են իրենց խոսքում, արդյունքում զարգանում են նրանց մտածողությունը, դատողական ունակությունները, որը և քերականության առջև դրված նպատակն է:

Տարրական դպրոցում կարևոր խնդիր է հիշողության զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը: Կրտսեր դպրոցականներից շատերն օժտված են մեխանիկական հիշողությամբ և ուսուցման ընթացքում բավականին հեշտ անգիր են անում ուսումնական տեքստերը: Աշակերտների խոսքը զարգացնելու համար հանձնարարվում են կազմել նախադասություններ, հորինել պատմություններ որևէ նկարի, սեփական դիտումների վերաբերյալ: Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար խմբային համագործակցության միջոցով հորինում ենք բանաստեղծություններ, զվարճալի պատմություններ, հեքիաթներ և այլն, այս ճանապարհով զարգացնելով և բարձրացնելով երեխայի մտածողական ընդունակությունները՝ հող ենք նախապատրաստում նրա հոգեկան մյուս գործընթացների զարգացման համար, երևույթների արտաքին և ներքին հատկություններն ու հարաբերությունները ճանաչելու շնորհիվ սովորողը ձեռք է բերում յուրացրած գիտելիքների շուրջ տրամաբանված խոսք կառուցելու հմտություն:

Մայրենիի դասի կարևորագույն խնդիրներց է բառապաշարի զարգացումը: Տարրական դասարաններում անծանոթ բառերի բացատրման արդյունավետ միջոցներից են զննական պարագաները: Եթե երեխան տեսնում է առարկան կամ իրը, հետո լսում դրա անունը, այն անջնջելի կերպով դրոշմվում է նրա հիշողության մեջ: Տարրական գիտելիքների ուսումնասիրման գործընթացում կարևոր դեր ունի նաև խաղը: Խաղը մարդուն ուղեկցում է ողջ պատմական զարգացման ընթացքում՝ հատկապես փոքր տարիքում, սակայն այսօր դպրոցականներն ունեն շատ հետաքրքիր ու զարգացնող խաղալիքներ, ուստի միայն դասագիրքն ու կավիճը

նրանց այդքան էլ հետաքրքիր չէ ։ Խաղը ցանկացած ուսումնական նյութի յուրացում դարձնում է ավելի հետաքրքրաշարժ ու գրավիչ։ Դասն առավել արդյունավետ դարձնում են դիդակտիկ խաղերը, որոնց միջոցով կրտսեր դպրոցականներն ինքնադրսևորվում են։ Գրաճանաչության շրջանում կիրառվում են վերլուծական-համադրական հնչույթավանկային կամ վերլուծական-համադրական հնչույթաբառային մեթոդները։ Աշակերտները սովորում են խոսքից անջատել նախադասությունները, դրանք վերածել բառերի, բառերը՝ վանկերի, վանկերը՝ հնչույթների։ Առաջին դասարանի մայրենիի դասընթացը հիմնականում բաղկացած է գրաճանաչության ուսուցումից, մասամբ նաև՝ ընթերցանությունից, որը ներառում է նաև ուղղագրության և լեզվական նախագիտելիքների տարրերը ։ Տարրական դասարաններում և՛ գրաճանաչության ուսուցումը, և՛ կարդալ ու գրել սովորեցնելն ինքնանպատակ չեն. դրանք միջոց են հետևողականորեն իրականացնելու խոսքի զարգացման ծրագրային պահանջները։ Քանի որ կրտսեր դպրոցական տարիքն անփոխարինելի մի ժամանակաշրջան է երեխայի լեզվազգացողության արթնացման ու մշակման, մայրենի լեզվի բառապաշարի հիմնական ֆոնդի յուրացման, բանավոր խոսքի զարգացման համար, ուստի անհրաժեշտ է տարրական դասարանները դարձնել երեխայի խոսքի զարգացման օղակը ։

Նախադասությունների շուրջ կատարվող աշխատանքը նպաստում է աշակերտի խոսքի ու մտածողության զարգացմանը։ Նախադասության մասին լեզվական նախագիտելիք երեխաներն ստանում են դեռևս նախապատրաստական շրջանում նկար-նախադասությունների միջոցով՝ թեմատիկ նկարներից առանձնացնելով կամ ինքնուրույն նախադասություններ կազմելով։ Ուսուցման հիմքը դրվում է ուսումնառության սկզբնական շրջանում և այնուհետև շարունակվում դպրոցական ողջ տարիների ընթացքում և ոչ միայն։ Նոր դպրոց մտնող երեխայի խոսքի զարգացման աշխատանքներն իրականացվում են լեզվական տարրական գիտելիքների ուսուցման միջոցով, որի ընթացքում լուծվում են աշակերտի խոսքի զարգացման մի շարք խնդիրներ՝ հնչյունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը, ճիշտ շեշտադրումը, բառակապակցություններ, ապա նախադասություններ կառուցելու կարողությունը, բառիմաստի ընկալման, ճիշտ կիրառման և պատկերավոր խոսք կառուցելու կարողությունը։ Ամրապնդման համար համապատասխանաբար կատարվում են ճանաչողական և կիրառական վարժություններ։ Սկսած նախապրբենական շրջանից՝ աշակերտներին գաղափար է տրվում բանավոր և գրավոր խոսքի մասին, պատումի, նախադասության մասին, զարգացվում նրանց տեսողական-պատկերային մտածողությունը, ձևավորվում մտքերը հասկանալի և ճիշտ ձևակերպելու, հաղորդակցվելու, ինքնարտահայտվելու կարողություններ։ Ուսուցման ընթացքում ուսուցիչը կրտսեր դպրոցականների առջև խնդիր է դնում իր կողմից առաջադրվող հարցերին տալ լիարժեք և տրամաբանված պատասխաններ, խոսել ճիշտ ու գրագետ, խուսափել անհարկի կրկնություններից։ Հատկապես ուշադրություն պետք է դարձնել, որ աշակերտը ազատ և անկաշկանդ մտածի և հաղորդակցվի, կարողանա հասկանալ տրված հարցերը և ճշգրիտ պատասխանել դրանց, կարողանա ճիշտ կողմնորոշվել խոսքային իրադրության մեջ։

Երեխային առաջարկում ենք պատմել իր, ընտանիքի, ընկերների, սիրելի իրի և այլ առարկաների կամ երևույթների մասին, սովորեցնում համեմատել և գտնել առարկաների նմանություններն ու տարբերությունները և այլն, ձևավորում ենք դիմացինի խոսքը լսելու կարողություն: Աշխարհաճանաչողական տեղեկությունների միջոցով զարգացնում ենք խոսքն ու մտածողությունը, նոր բառերի միջոցով հարստացնում բառապաշարը, այն մաքրում ժարգոնային, բարբառային, մակաբույծ բառերից՝ բացատրելով, որ «ամեն մի ավելորդ բառ մոտավորապես նույնն է, ինչ դերասանի համար ավելորդ շարժումը, երաժիշտի համար՝ ավելորդ ձայնը, հնչյունը, նկարչի համար ավելորդ գույնն ու վրձնահարվածը» : Արդեն հետայբբենական շրջանում աշխատանքներ են տարվում խոսքի, բառի, նախադասության և տեքստի շուրջ, գործնականում կիրառում լեզվական տարրական գիտելիքները: Օրինակ՝ բառի մասին գաղափար կազմելու համար աշակերտներին հարցնում ենք, թե ի՛նչ են տեսնում իրենց շրջապատում, աշակերտներն սկսում են անվանել տարբեր առարկաներ, այնուհետև հարցնում ենք, թե ինչպե՛ս են տարբերում այդ առարկաները, աշակերտներն անվանում են առարկաների տարբեր հատկանիշներ, բնութագրում են դրանք, ասում, թե ո՛ր առարկան ինչի համար է: Աշակերտներին կարելի է առաջարկել իրենց խոսքը կառուցել շաղկապների միջոցով (Ինձ դուր չեկավ տղայի արարքը, որովհետև նա դրանով ցավ պատճառեց մեկ ուրիշին և այլն): Խոսքի կառուցման այս եղանակը կնպաստի աշակերտների տրամաբանված խոսքի զարգացմանը: Բառի մասին գաղափար տալուց հետո կատարում ենք եզրահանգում, որ յուրաքանչյուր առարկա ունի իր անվանումը, յուրաքանչյուր բառ ունի իր նշանակությունը, իմաստը: Երեխաներին բացատրում ենք, որ բառը պետք է անպայման իմաստ ունենա, որ հնչյունների ամեն կապակցություն բառ չէ:

Տարրական դասարաններում բառապաշարի հարստացման միջոցով պետք է ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, հարստացնել գիտելիքները: Այդ աշխատանքներն իրականացվում են բառակազմական, բառի մասին բացատրման և նրա ճիշտ գործածման վերաբերյալ վարժությունների, հոմանիշների, հականիշների շուրջ աշխատանքների միջոցով: Այդ նպատակով կատարում ենք ճանաչողական, կիրառական և ստեղծագործական բնույթի վարժություններ: Կրտսեր դպրոցականին պետք է վարժեցնել տեքստում ճանաչել նոր բառը, բառարանում գտնել նոր անծանոթ բառի բացատրությունը, այն կիրառել խոսքում՝ կազմելով բառակապակցություններ, նախադասություններ: Այս գործընթացը պետք է կրի շարունակական բնույթ, որպեսզի ձևավորվի աշակերտի՝ նյութի մեջ նոր բառի ճանաչման ու ընկալման կարողությունը: Նմանատիպ աշխատանք պետք է կազմակերպել թե՛ դասարանական, թե՛ արտադասարանական ընթերցման ժամանակ: Այս տարբերակը լայն հնարավորություն է տալիս աշակերտին անընդհատ և բազմակողմանիորեն հարստացնելու բառապաշարը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնառության տարիներին ուսումնասիրվում են տարբեր առարկաներ, որոնց դասագրքերը մի մեծ բառարան են բառապաշարի հարստացման համար:

Կրտսեր դպրոցական տարիքում կարևոր գործառույթ է երեխայի

մտածողության զարգացումը, պատկերավոր մտածողությունից վերացական մտածողության անցումը, սակայն այդ ամենը պետք է իրականացնել կոնկրետ փաստերի, ակնառու նյութերի հիման վրա, որպեսզի այն հասանելի լինի աշակերտի դատողական մտածողությանը: Իհարկե հետագայում աստիճանաբար պատկերներով աշխատելու ծավալը պետք է կրճատվի: Տարրական դպրոցում կարևոր խնդիր է հիշողության զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը: Հաճախ են հանդիպում այնպիսի երեխաներ, որոնք նյութը վերարտադրելիս այն կարդում են «օդում»՝ դասագրքի նյութը մտովի բերելով տեսողական դաշտ: Այս երևույթը դժվարության է հանգեցնում միջին դասարաններում, քանի որ ուսուցանվող նյութերն աստիճանաբար դառնում են բարդ ու ծավալուն: Աշակերտներն սկսում են բառացի վերարտադրել իրենց մտապահածը: Նրանք չեն ձգտում բացահայտել երևույթի էությունը, այլ հաջողությամբ կրկնօրինակում են: Հետևաբար տարրական դպրոցում պետք է կատարելագործել երեխայի հիշողությունը, յուրացնել տալ մտապահման ավելի իրատեսական մեթոդներ: Տարրական դասարաններում ուսումնական նյութն ուսումնասիրելիս ուսուցիչը սովորեցնում է դուրս գրել հերոսներին բնութագրող բառերն ու արտահայտությունները, ձևավորում հերոսների արարքների դրդապատճառը որոշելու կարողություններ, պահանջում բանավոր կամ գրավոր արտահայտել իրենց կարծիքը հերոսների վարքագծի կամ դեպքերի վերաբերյալ:

## 1.2. ԲՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրումն իրականացվում է բնագրի շուրջ աշխատելու շնորհիվ : Նախ՝ պետք է զարգացնել կրտսեր դպրոցականի կարդալու կարողությունը, այնուհետև զարգացնել երեխաների ձեռք բերած բառապաշարը, կապակցված խոսք կազմելու ունակությունը: Տարրական դպրոցում մայրենիի դասերը կազմակերպվում են բացատրական ընթերցանության մեթոդով: Առանձնացվում է բացատրական ընթերցանության 5 բաղադրամաս.

«Բառակազմություն» թեմայի ուսումնասիրումը կրտսեր դպրոցականներին լայն հնարավորություն է տալիս բառակազմական տարբեր միջոցներով նոր բառեր կազմելու համար: Այս թեման ուսումնասիրելիս երեխաները ծանոթանում են պարզ, բարդ, ածանցավոր բառերին, հոդակապով և անհոդակապ կազմություններին, նախածանցներին ու վերջածանցներին: Աշակերտների գիտական բառապաշարը համալրվում է նաև երրորդ դասարանում՝ խոսքի մասերն ուսումնասիրելիս: Այս նպատակներին հասնելու համար քիչ է տարրական դասարանների դասագրքերում լավ բնագրեր ունենալը. անհրաժեշտ է այդ նյութերը համակողմանիորեն հասցնել երեխայի գիտակցությանը, այն վերլուծել այնպես, որ աշակերտի շրջանում սեր առաջանա ընթերցանության նկատմամբ, մեծանա բնագրի ընկալման խորությունը : Աշակերտների լեզվական տարրական գիտելիքների հարստացման աշխատանքները կատարվում են մայրենիի դասի բոլոր փուլերում /խթանման, իմաստավորման, կշռադատման/, նոր նյութ հաղորդելիս՝ ակտիվ երկխոսությունների միջոցով, ընթերցելիս ու պատմելիս և բառային աշխատանքի ու բնագրերի վերլուծության ժամանակ: Դասագրքերի բնագրերում կիրառված գեղեցիկ բառերն ու արտահայտությունները, գեղարվեստական պատկերավորման միջոցները պետք է դարձնել աշակերտների սեփականությունը, զարգացնել նրանց խոսքը:

Աշակերտների բառապաշարի հարստացման աշխատանքները կատարվում են բնագրի շուրջ աշխատելու միջոցով: Բնագրի շուրջ աշխատելու միջոցով տարրական գիտելիքների ուսուցման վերջնարդյունքը պետք է լինի հետևյալը. Հանրակրթական դպրոցում մայրենիի ուսուցման հիմնական խնդիրը սովորողների՝ գրագետ, քերականորեն ճիշտ, բովանդակային և արտահայտիչ, հայերենի ուղղագրական, ուղղախոսական կանոններին, գրական հայերենի շեշտադրությանը համապատասխան գրավոր և բանավոր խոսք կառուցելու կարողության ձևավորումն է: Մայրենի լեզվի քերականության ուսումնասիրման գործընթացում աշխատանք է տարվում նաև այնպիսի ունակությունների ձեռք բերման ուղղությամբ, որոնք միաժամանակ ընդհանուր են բազմաթիվ այլ դասընթացների ուսումնասիրման համար: Ընդհանուր ուսումնական այսպիսի կարողությունների թվին են պատկանում այնպիսի խոսքային ունակությունները, ինչպիսիք են՝ տեքստի ընկալումը, վերարտադրումը և տեքստի ինքնուրույն հյուսումը՝ հիմք ընդունելով նրա թեմայի,

գլխավոր մտքի, կառուցվածքի և արտահայտչամիջոցների առանձնահատկությունների ըմբռնումը:

Տարրական դպրոցում լեզվական գիտելիքների ուսուցման և դրանց՝ կարողությունների ու հմտությունների վերածման գործընթացն ունի մանկավարժամեթոդական որոշակի առանձնահատկություններ՝ պայմանավորված կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեկան գործընթացներով, ինչպես նաև՝ հայոց լեզվի քերականության բովանդակության յուրահատկություններով: Դրանց ճանաչումն ու մայրենիի դասերի ժամանակ հաշվառումը չափազանց կարևոր է, ավելին՝ պարտադիր: Մայրենիի ուսուցման գործընթացում դպրոցի կարևորագույն խնդիրներից է քերականական գիտելիքների ուսուցումը: Քերականական գիտելիքների ուսուցումը կրտսեր դպրոցում եղել է թե՛ դասվարների թույլ կողմը, թե՛ ուսումնական գործընթացում աշակերտների կրած դժվարությունների մեջ գերակշռողը: Այս երևույթը հիմնավորվում է ոչ թե տարրական դասարանների ուսուցիչների հայոց լեզվի քերականության անբավարար իմացությամբ կամ կրտսեր դպրոցականների՝ նշված դասընթացի ծրագրային նյութը յուրացնելու համար անհրաժեշտ կարողությունների բացակայությամբ, այլ քերականության դասընթացի ուսուցման մեթոդական համակարգի անկատարությամբ, դպրոցական պրակտիկայում դրա ոչ ճիշտ կիրառմամբ, ինչպես նաև՝ մայրենիի դասագրքերում դասընթացի մեթոդապես անկատար մակարդակով ներկայացվածությամբ, երեխաների կենսափորձից քերականության դասընթացի կտրվածությամբ և այլն: Յուրաքանչյուր բնագրի շուրջ, բնագրի ընձեռած հնարավորություններով և լեզվառճական առանձնահատկություններով պայմանավորված, կարող են հանձնարարվել վարժություններ լեզվի տարբեր բաժիններից ։ Լեզվական առաջադրանքների բովանդակությունը պետք է բխի բնագրի ընձեռած հնարավորություններից: Լեզվական առաջադրանքները մղում են մտածելու և հաճախ ներկայացնում են ոչ թե երևույթների պարզ կիրառությունները, այլ յուրահատուկ դեպքերը, որոնք նկատելու և հասկանալու համար պետք է մտածել՝ գործնական ու տեսական գիտելիքները զուգադրելով, վերլուծելով ու հասկանալով:

## ԳԼՈՒԽ 2. ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

### 2.1 ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ, ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՄԱՅՐԵՆԻՒ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրերի՝ նախաայբբենական շրջանում պետք է իրականացնել երեխաների հոգեբանական, ֆիզիկական և գործնական նախապատրաստում ուսումնական գործունեությանը. պետք է ընդհանուր պատկերացում տալ բանավոր խոսքի մասին: Բանավոր խոսքին առաջադրվող պահանջները հանգում են մասնավորապես բառապաշարի, ձևակերպումների ըստ պատշաճի կիրառմանը, կանոնական և ոչ կանոնական ձևերի տարբերակմանը, արտասանական նորմերի պահպանմանը, օտարաբանությունների, ժարգոնի, հասարակաբանությունների և գռեհկաբանությունների, անհարկի բարբառայնության բացառմանը, լեզվական միջոցների ճիշտ ընտրությանը, դիմելաձևերի, ինչպես նաև դու և դուք-ի հստակ սահմանազատմանը : Տարրական դասարաններում պետք է զարգացնել աշակերտի պատկերային մտածողությունը, համեմատելու և հակադրելու կարողության ձևավորումը: Պատկերավոր մտածողությունը թույլ է տալիս աշակերտին ներկայացնել իր պատկերացումներն աշխարհի վերաբերյալ: Աշակերտը պետք է կարողանա իր մտքերը հասկանալի ձևակերպի: Սրա համար անհրաժեշտ է կատարել տարբեր վարժություններ: Օրինակ՝ տեքստի խառնված նախադասությունների շտկում, պլանի կազմում և դրան համապատասխան պատմության հորինում:
Առաջին դասարանցին պետք է կարողանա խոսքը տրոհի նախադասությունների, նախադասությունները՝ բառերի, պետք է հստակ իմանա նախադասության սկիզբը և վերջը խորհրդանշող նշանները, աշակերտը պետք է իմանա բառի դերը նախադասության մեջ: Առաջին դասարանցիները բառի մասին նախնական պատկերացում ունեն դեռևս գրաճանաչության շրջանից: Գիտեն, որ յուրաքանչյուր բառ նախադասության մեջ մի իմաստ է արտահայտում: Այնուհետև պետք է պատկերացում ունենան վանկի մասին: Այն արտասանական նվազագույն միավոր է, որը հնչեղությամբ ավելի ուժեղ է իրեն սահմանազատող հնչյուններից և սերտ արտասանական ամբողջություն է կազմում իր բաղադրիչներով: Հնչյունն արտաբերվում է մարդու արտասանական գործարաններով և ընկալվում ականջով: Հնչյունները լեզվի նյութական նվազագույն միավորներն են: Դրանք ինքնին նշանակություն չունեն, սակայն ծառայում են որպես միջոց իմաստակիր միավորներ, օրինակ, բառեր կազմելու համար: Տարրական դասարաններում աշակերտը պետք է տարբերակի տպագիր և ձեռագիր տառերը:

Հայտնի է, որ տարրական դասարաններում լեզվական գիտելիքներն ուսումնասիրվում են երկու փուլով. առաջին փուլում դրանք ներմուծվում են աշակերտների բառապաշարի մեջ համեմատաբար մատչելի

բառակապակցություններով ու արտահայտություններով, երկրորդ փուլում՝ քերականական եզրույթներով: Առաջին դասարանում՝ որպես լեզվական նախագիտելիք, երեխաները ծանոթանում են առարկա, հատկանիշ, գործողություն ցույց տվող բառերին, որոնց երկրորդ դասարանում արդեն անվանում են քերականական եզրույթներով՝ գոյական անուն, բայ, ածական: Գրաճանաչության նախաայբբենական շրջանից սկսած՝ երեխան լսում է պատմություն, նախադասություն, բառ, վանկ, հնչյուն և այլ եզրույթներ : Որպեսզի դրանք շուտ չմոռացվեն, ուսուցիչը լեզվական այս հասկացություններն ուսումնասիրում է նախ՝ նկարների ու գծային մոդելների, ապա՝ հնչյունային խոսքի ու գրաֆիկական հիմքով՝ կոնկրետ լեզվական նյութի միջոցով:

Դեռևս առաջին դասարանում աշակերտներն ուսումնասիրում են հայերենի հնչյունաշարը, տարբերակում են ձայնավոր և բաղաձայն հնչյունները, որոշ չափով ծանոթանում դրանց ուղղագրությանը, որն ամրապնդվում է հաջորդ դասարաններում: Դրան պետք է ավելացնել մեծատառերի ուղղագրության վերաբերյալ այբբենական մասում անցածը, պետք է առաջադրվի նաև բաղաձայնների ուղղագրությանը վերաբերող բառացանկ՝ ուսումնասիրելով զուտ գործնական ճանապարհով, առանց կանոնարկման:

Երկրորդ դասարանի դասագրքերը կազմված են թեմատիկ խմբավորման սկզբունքով, որոնք ընդգրկում են կրտսեր դպրոցականների աշխարհընկալմանը համապատասխան նյութեր և նպատակ են հետապնդում զարգացնել կրտսեր դպրոցականի երևակայությունը, մտածողությունը, խոսքը, կարդալու կարողությունը, ձևավորել ինքնուրույն, ինքնավստահ, հոգեպես առողջ անձ: Երկրորդ դասարանում կրկնում են նաև հնչյունաբանությանը, ուղղագրությանը, ուղղախոսությանը և տողադարձին վերբերող թեմաները, ամրակայում են բառի կազմությունը, անդրադառնում են պարզ, բարդ, ածանցավոր բառերին և դրանց ուղղագրությանը, անձ և իր, հատուկ և հասարակ անուններին, հոմանիշ, հականիշ բառերն են կրկնում, ամրապնդում են նախադասության, տարբեր կառուցվածք ունեցող նախադասությունների մասին գիտելիքները:

Երրորդ դասարանում ուսումնասիրում են ուղղագրությանը, ձևաբանությանը, շարահյուսությանը վերաբերող թեմաները, չորրորդում անդրադառնում են ուղղագրությանը, բառերի կազմությանը, բառիմաստին, բառի ուղիղ և փոխաբերական իմաստներին, բառակապակցությանը, դարձվածքի, գոյականի, ածականի, բայի, նրանց ձևափոխությունների կրկնությունը, ինչպես նաև՝ թվականի, դերանվան ուսումնասիրմանը: «Մարենի»-ի դասագրքերում առանձնակիորեն կարևորվում են և՛ ընթերցողական կարողությունների, և՛ լեզվական նախագիտելիքների ու տարրական գիտելիքների տիրապետման ծրագրային պահանջները: Երրորդ դասարանում խոսքի մասերի վերաբերյալ ընդհանուր հասկացություն տալու համար որոշվում է, թե բառն ինչի՛ համար կարող է օգտագործվել, ի՛նչ պաշտոն կարող է ունենալ նախադասության մեջ, կառուցողական

ի՛նչ բնագավառի մեջ կարող է այն պետք գալ: Բառի՝ խոսքի մաս լինելու հատկությունն այլ կերպ կոչվում է քերականական արժեք, ուստի խոսքի մասերը որոշել նշանակում է բառերի քերականական արժեքը որոշել: Բառի քերականական արժեքը որոշելու համար անհրաժեշտ է իմանալ բառի քերականական հատկանիշները, այսինքն՝ թե ի՛նչ կատեգորիայի հասկացություններ է արտահայտում, ձևաբանական ի՛նչ հատկանիշներ ունի, շարահյուսական ի՛նչ պաշտոններ կարող է կատարել: Այդ նպատակով նախ՝ բառերը խմբավորվում են ըստ խոսքի մասերի, այսինքն՝ ըստ նրանց արտահայտած հիմնական նշանակության, ապա՝ ուսումնասիրվում են յուրաքանչյուրի ձևաբանական և վերջապես՝ շարահյուսական հատկանիշները: Հանրակրթական դպրոցի «Մայրենի»-ի չորրորդ դասարանի դասագրքերն իրենց բովանդակությամբ կարողացել են ապահովել մայրենիի և ընթերցանության համակցված ուսուցումը՝ օգտագործելով ընթերցանության տեքստերը: Նշված դասարանում ուսումնասիրում են հայերենի ուղղագրությունը, բառերի կազմությունը, բառիմաստը, բառի ուղիղ և փոխաբերական իմաստները, անդրադառնում են նաև բառակապակցության ու դարձվածքի, գոյականի, ածականի, բայի, նրանց ձևափոխությունների (առանց «հոլովում» և «խոնարհում» եզրույթները գործածելու) կրկնությանը, ինչպես նաև՝ թվական անվանը, դերանվանը: Չորրորդ դասարանում ուսումնասիրում են նաև նախադասության տեսակներն ըստ կազմության, ըստ հաղորդակցման նպատակի, կոչականը, շեշտի, գծիկի, բացականչական և հարցական նշանների գործածությունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ուսումնասիրելով մեր թեմայի հիմնախնդրին վերաբերող գիտամեթոդական գրականություն՝ եկել ենք հետևյալ եզրահանգումների.

- ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրմանը, ինչը նպաստավոր նախադրյալներ կստեղծի միջին դպրոցում լեզվի համակարգի ուսումնասիրման համար:
- Մեր կողմից մշակված մեթոդական ցուցումների կիրառմամբ պարզվեց, որ բնագրի շուրջ աշխատանքներ կատարելը մեծապես նպաստում է կրտսեր դպրոցականի՝ լեզվական տարրական գիտելիքների յուրացմանը և զարգացնում է աշակերտների խոսքը:
- Տարրական դպրոցում մայրենիի առարկայական ծրագրի լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրումը բովանդակային և կառուցվածքային բարդ համակարգ է, որը ներառում է կրտսեր դպրոցականների կարդալու, գրելու, մտածելու, ստեղծագործելու կարողությունների ու հմտությունների ձևավորման համալիր:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Լ. Ասրյան, Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը դպրոցական մակարդակում, Երևան, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2018, 150 էջ:

2. Ավագյան Լ., Տեր-Գրիգորյան Լ., Աշխատանք բնագրի շուրջ, Երևան, 2018, 176 էջ:

3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, 316 էջ:

4. Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Երևան, 2009, 80 էջ:

5. Խաչատրյան Ա., Լեզվագործածման առանձնահատկությունները հայերենում, «Աբեղյանական ընթերցումներ», Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 233-239:

6. Տեր-Գրիգորյան Ա., Ուսուցումը նոր առաջին դասարանում, Երևան, 1986, 196 էջ :

7. Խարազյան Ռ., Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, Ասողիկ հրատ., Երևան, 2003, 128 էջ:

8. Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական առարկայական չափորոշիչ և ծրագիր, Անտարես, Երևան, 2011, 192 էջ:

9..https://www.imdproc.am/p/mayreni/1-dasaran/lezvakan-tarrakan-giteliqner-8067, հասանելի էր 23.05.20թ.:

10. http://gspi.am/media/journal/2014n1b/34.pdf, հասանելի էր 15.03.20թ.

11.Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Այբբենարան, Մանմար, 2020, 156 էջ:

12. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Մայրենի 2, Մանմար, 2020, 88 էջ:

13. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Մայրենի 3, Մանմար, 2020, 88 էջ:

14. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Մայրենի 4, Մանմար, 2019, 88 էջ: